ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

“ 13 ” նոյեմբերի 2012թ.

№ 124-Ա

«ԱՐԾՎԱՆԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 70-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Արծվանիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2012թ. նոյեմբերի 8-ի<<Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին>> N 3 որոշումը և եզրակացությունը, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝**

1.Սեյրան Վահանի Գրիգորյանին 2012թ. նոյեմբերի 13-ից նշանակել «Արծվանիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնում:

Հիմք. « Արծվանիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2012թ. նոյեմբերի 8-ի <<Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին>> N 3 որոշումը և եզրակացությունը, Ս.Գրիգորյանի անձնական դիմումը:

2. Ս.Գրիգորյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյանին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ.նոյեմբերի 13
ք. Կապան